ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24.05.2017թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2017 թվականի հունվարի 20-ի N 15-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի առաջատար մասնագետ Լիլիթ Քոչարյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Սասուն Խեչումյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի, կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի և ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Վահագնաձոր համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, պաշտպանության, կրթության, առողջապահության և քաղաքաշինության ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 1 նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Վահագնաձոր համայնքի ղեկավարին:

Լիլիթ Քոչարյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Էդգար Հախվերդյան _____

Սասուն Խեչումյան _____

Սպարտակ Ղուբաթյան _____

Անահիտ Բարոյան _____

Արման Մխիթարյան _____

Գագիկ Հախինյան _____

Համայնքի ղեկավար՝
Էդիկ Եղոյան _____